Տեղեկացնում ենք, որ **ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը** (МГИМО/ՄՄՀՊԻ) և **Դիվանագիտական ակադեմիան** հայտարարում են 2022/2023թթ. ուսումնական տարվա համար ընդունելություն՝ Հայաստանի Հանրապետությանը հատկացված քվոտային տեղերի շրջանակներում:

2022/2023թթ. ուսումնական տարվա համար **ՄՄՀՊԻ-*ի*** կողմից ՀՀ-ին հատկացված քվոտաների ընդհանուր քանակը 7-ն է՝ 5 բակալավրիատի և 2 մագիստրոսական ծրագրերի դիմելու հնարավորությամբ */Առդիր 1՝ տեղեկատվություն առաջարկվող կրթական ծրագրերի վերաբերյալ/:*

Դիվանագիտական ակադեմիան տրամադրում է սահմանափակ քանակությամբ տեղեր՝ կախված ընդունելության քննություններում դիմորդների արդյունքներից */Առդիր 2՝ տեղեկատվություն առաջարկվող կրթական ծրագրերի վերաբերյալ/:*

Նշված ԲՈՒՀ-երում ընդունելության քննությունները կանցկացվեն հեռավար ձևաչափով:

Հայտնում ենք, որ ՀՀ-ին հատկացված քվոտաներով նշված ԲՈՒՀ-երում ուսումն անվճար է, սակայն ուսումնառության ամբողջ ընթացքում կեցության հետ կապված ծախսերը, ինչպես նաև ճանապարհածախսը պետք է հոգան մասնակիցները: Հանրակացարաններում բնակությունը՝ տեղերի առկայության պարագայում, նույնպես վճարովի է:

Վերը նշված ԲՈՒՀ-երի ուսումնական ծրագրերին դիմելու համար ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր ներկայացնելու **վերջնաժամկետն է** 2022**թ. ապրիլի** 26-**ը**:

ՀՀ ԱԳՆ ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.

- դիմում ՀՀ ԱԳ նախարարի անունով,
- անձնագրի պատճենը,
- ատեստատի պատճենը (բակալավրիատի դեպքում) /դիպլոմի պատճենը (մագիստրատուրայի դեպքում)՝ ներառյալ ներդիրները,
- արական սեռի դիմորդների պարագայում՝ կցագրման վկայականի կամ զինվորական գրքույկի պատճենները,
- ինքնակենսագրություն՝ շարադրված ազատ ոճով,
- 2 գունավոր լուսանկար 3X4 չափսի:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել secretariat@mfa.am էլ. հասցեին: Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել ՀՀ ԱԳՆ՝ +37460-620-312 հեռախոսահամարով: